ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնք
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7, /0232/3-10-26 ashtarakmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2016թվականի N 39-Ա

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՈՐՈՇԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016թվականի փետրվարի 9-ի N95-Ա հրամանը /մարզպետարանի՝ 22.02.2016թ. N 01/15/599-16 գրությամբ/, ղեկավարվելով <իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 32/17 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերում և այլ իրավական ակտերի վերնագրերում, տեքստերում և հավելվածներում <քաղաքապետարան> բառը կարդալ <համայնքապետարանի> բառերով:

2. Աշխատակազմի քարտուղարին /Գ. Դատումյան/, իրավաբանին /Ս. Սահակյան/

- Իրավական ակտեր և այլ փաստաթղթեր կազմելիս հիմք ընդունել < Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում կատարված փոփոխությունը:
- Սույն որոշումը տրամադրել բոլոր աշխատակիցներին:

Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

25.02.2016թ.,
ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնք
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7, /0232/3-10-26 ashtarakmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 239-Ա

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն առաջանալու կապակցությամբ, հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետի 06.07.2016թ. N 01/15/2485-16 գրությունը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 12.05.2016թ. N 05-Ն հրամանը, ղեկավարվելով <Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի և <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 32/17 հոդվածի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հաստատել Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգերը /Հավելված 1, 2, կցվում է/:
2. Աշխատակազմի քարտուղարին /Գ. Դատումյան/ և հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնող լիազորված անձին /Շ. Հովհաննիսյան/
- Մրցույթների և ատեստավորման աշխատանքների կազմակերպման և իրականացման ընթացքում խստորեն ղեկավարվել սույն որոշմամբ հաստատված աշխատակարգերով:
3. Նախկինում հաստատված աշխատակարգերը համարել ուժը կորցրած:

Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

08.07.2016թ., 12:12
ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնք
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7, /0232/3-10-26 ashtarakmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 240-Ա

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 12.05.2016թ. N 02-Ն հրամանը, ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 32/17 հոդվածի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերում և այլ իրավական ակտերի վերնագրերում, տեքստերում և հավելվածներում <քաղաքապետարան> բառը կարդալ <համայնքապետարան> բառերով:

- Ի գիտություն ընդունել, որ սույն փոփոխության վերաբերյալ առկա է Աշտարակ համայնքի ղեկավարի 25.02.2016թ. N 39-Ա որոշումը /կցվում է/:

2. Աշխատակազմի համայնքային ծառայողների այն պաշտոնի անձնագրերում /հավելվածներում/, որտեղ առկա է <2015> թիվը, փոխարինել <2018> թվով:

3. Աշխատակազմի քարտուղարին /Գ. Դատումյան/, իրավաբանին /Ս. Սահակյան/, կադրերի պատասխանատուին /Շ. Հովհաննիսյան/

- պաշտոնների անձնագրերում և այլ հավելվածներում կատարել անհրաժեշտ փոփոխությունները:

Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

08.07.2016թ.
ք.Աշտարակ